զուն-քէօքրիւ , Քուլէլի Պուր-
կազ , Ուրլը եւ Էտիրնէ :



Էտիրնէ—Ֆիլիպէ—Սարէմ պէյ .

Կայարանք . — Էտիրնէ ,
Մուսթաֆա-փաշա , Հարմանլը ,
Թոնօլա-Սէմէնլի , Քայաճըք ,
Հասքէօյ , Եէնի-մահալլէ , Բա-
բազլը , Քաթուհիճա , Ֆիլիպէ ,

Թաթար-Պաղարճըք . Սարէմ-
պէյ :



Գուլէլի—Պուրկաղ—Տէտէ—Աղաճ .

Կայարանք , — Գուլէլի—
Պուրկաղ , Տէմօթէքա , Սուֆլի,
Պէտիկլի , Ֆէռէ , Տէտէ—աղաճ :



ԵՐԿԱԹՈՒՂՂԻ

ԱՄԻԱ Կ. ԹՈՒՐԻԹԻՈՅ

Պօլիս—Իզմիտ .

Հայտար բաշա , Քըզըլ թօր-
րաք , Էրէնքէօյ , Պօսթանճըք ,
Մալթէբէ , Գարթալ , Բէնալիք ,
Թուզլա . Կէպղէ , Լալիճէտէք ,
Հէրէքէ , Իզմիտ :



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍ. ՀԱՅՔ

Գեր. Ներսէս Սրբազան վարժա-
պետեան , Պատրիարք համայն Լուս.
Հայոց ի Թիւրքիա . — Տեղապահ .
Արժ. Յովհաննէս Գազանոյ Մըկըր-
եան : — Գործակատար Աբրահամ
էֆէնտի Յրէնկեան : Կաթողիկոս Էջ-
միածնի Գէորգ Գ. Հայրապետ ամե-
նայն Լուս. Հայոց : — Պատրիարք Ե-
րուսաղեմոյ Գեր. Եսայի Արքեպիս-
կոպոս :

ԱԻԵՏ. ՀԱՅՔ

Վսեմ. Յակոբ էֆէնտի Մատթէոս-
եան , Աղգապետ համայն Բողոքակա-
նոց ի Թիւրքիա . — Աղգապետարան
ի Բարձրագոյն Գուս. — Տեղապահ
և Գործակատար Ստեփան էֆէնտի
Անտոնեան :

ՀՈՈՄ. ՀԱՅՔ

Գեր. Օհան Բիւրէլեան , Պատրիարք
համայն Հոմ. Հայոց ի Թիւրքիա :

ՅՈՑՆՔ

Գեր. Յովակիմ Արքեպիսկոպոս,
Պատրիարք համայն Յունաց ե թիւրքիս :

ՊՈՒԼԿԱՐՔ

Գեր. Անթիմոս Արքեպիսկոպոս Էկզարք համայն Պուլկարաց ե թիւրքիս :

ՀՐԷԱՅՔ

Գեր. Մօղէ Լէվի Տեղապահ — Բառուճապետ համայն Հրէից ե թիւրքիս :



ԹՈՒՐԳԻԱ

Կայսր ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ԱԶԻԶԻԱՆ
Ծն. 9 Փետ. 1850. ԳՏ. 25 Յնս. 1861
ժղ. 29 1/2 միլ. զօրք 750,000. նաւ 120 :

ՌՈՒՍԻԱ

Կայսր ԱԼԷՔՍԱՆԴՐՅ. Ծն. 17 Ապր.
1818. ԳՏ. 2 Մրտ. 1855. ժղ. 86 1/2
միլ. զօրք. 1,500,000. նաւ 150 :

ԳԵՐՄԱՆԻԱ

Կայսր ՎԻԼՀԷԼՄ Ա. Ծն. 22 Մրտ.
1797. ԳՏ. 2 Յնվ. 1861. ժղ. 41 1/2
միլ. զօրք. 420,000. նաւ 75 :

ԲՐԻՏԱՆԻԱ

Թագուհի ՎԻՔՏՕՐԻԱ Ծն. 24 Մայ.
1819. ԳՏ. 20 Յնս. 1857. ժղ. 51 3/4
միլ. զօրք. 595,000. նաւ 250 :

ԱՒՍԴՐԻԱ

Կայսր ՅՐԱՆԶ ԵՕԶԷՅԱ. Ծն. 18 Օգ.
1850. ԳՏ. 2 Դեկտ. 1848. ժղ. 56 1/2
միլ. զօրք. 550,000. նաւ 80 :

ԻՏԱԼԻԱ

Թագաւոր ՎԻՔՏՕՐ ԷՄՄԱՆՈՒԷԼ.
Ծն. 14 Մրտ. 1820. ԳՏ. 17 Մրտ.
1861. ժղ. 26 3/4 միլ. զօրք. 200,000.
նաւ 65 :

ՀՈԼԱՆՏԱ

Թագաւոր ՎԻԼՀԷԼՄ .Գ Ծն. 19.
Փտբ. 1817. ԳՏ. 17 Մրտ. 1849. ժղ.
5 3/4 միլ. զօրք. 61,000. նաւ 110 :

ԲՈՐԹՈՒԿԱԼ

Թագաւոր ԼՈՒՏՎԻԿ Ա. Են. 51 Հոկ.
1858. Գ.Տ. 11 Նոյ. 1861. Ժղ. 4 1/4
միլ. զբ. 70,500. նաւ 45 :

ՇՎԷՏ-ՆՕՐՎԷԿ

Թագաւոր ՕՍԲԱՐ Բ. Են. 21 Յնվ.
1829. Գ.Տ. 18 Ապր. 1872. Ժղ. 6
միլ. զբ. 110,000. նաւ 100 :

ՍՊԱՆԻԱ

Նախագահ Հանրապետական, ՄԱ-
ՐԱԶԱԽՏ ՄԻՐԱՆՕ. Ժղ. 16 1/2 միլ. զբ.
80,000 . նաւ 125 :

ԳԱՂՂԻԱ

Նախագահ ՄԱԲ-ՄԱՀՈՆ ՄԱՐԱԶԱԽՏ
Գ.Տ. 24 Մայ. 1875. Ժղ. 56 միլ. զբ.
500,000 . նաւ 150 :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՔ

Նախագահ ԿՐԱՆԹ ՂՅՐԱՊԵՏ , Ժղ.
52. միլ. զբ. 2,000,000 , նաւ 18 :

ՊԷԼՃԻԳԱ

Թագաւոր ԼԷՕՔՕԼՏ Բ. Են. 9 Ապր.
1855. Գ.Տ. 10 Դկտ. 1865. Ժղ. 5
միլ. զբ. 98,000 :

ՀԷԼՎԷՏԻԱ

Նախագահ ՓԱՌԻԼ . Ժղ. 2 1/2 միլ.
զբ. 85,000 :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Թագաւոր ԳԵՒՈՐԳ Ա. Են. 24 Դեկ.
1845. Գ.Տ. 6. Յնս. 1865. Ժղ. 1 1/2
միլ. զբ. 45,000 :

ՏԱՆԻՄԱՐԲ

Թագաւոր ԳՐԻՍԹԻԱՆ Թ. Են. 8
Ապր. 1818. Գ.Տ. 15 Նոյ. 1818. Ժղ.
1 3/4 միլ. զբ. 46,000 :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Շահ ՆԱՍՐԷՏԻՆ . Ժղ. 5 1/2 միլ. :

ՊՐԱԶԻԼ

Կայսր ՏՅՆ ԲԷԹՐՈ Բ. ՄՆ. 2. Գ.ԵԿ.
1825. Գ.Տ. 7. Ա.ՊՐ. 1851. Ժ.Ղ. 8 միւլ

ՉԻՆ

Կայսր ԹՕՆ Կ-ՉԷ. Ժ.Ղ. 450 միւլ

ՃԱԲՈՆ

Ժողովուրդ 52 1/2 միւլեօն :



ԱՌՈՂՋԱԿԱՆ

Չմրան եւ գարնան եղանակին մարդս աւելի սննդեան եւ քնոյ կարօտ է քան թէ աարւոյ այլ եղանակաց մէջ :



Մերերն սննդեան կարօտութեան աւելի կը հանդուրժեն , քան թէ երիտասարդք . իսկ մանկունք բնաւ :



Չափազանց քուն եւ արթնութիւն — երկուքն ալ դէշ նշաններ են :



Անոնք որ երկարատեւ հի-

ւանդութենէ մը անցնելով նի-
հարացած են , պարտին զգու-
շութեամբ եւ նուազ առ նուազ
անանին :



Առողջ մարդ մը որ լաւ ա-
խորժակ ունի եւ անզօր է ,
գիտնալու է որ չափէն աւելի
կերակուրով ստամոքսը խան-
գարած է :



Անօթի փորանց աշխատե-
լու չէ :



Հիւանդութեան մէջ լաւ է
լոյժ՝ եւ ոչ կարծր , կերակուր-
ներով սնանիլ :



Նա որ մարմնոյ տարածէն

աւելի կերակուր կուտէ պիտի
հիւանդանայ :



Այն կերակուրը որ հիւանդը
ախորժանօք կուտէ , ֆեսս չի
տար :



Գեր մարդիկ աւելի յանկար-
ծամահ լինին քան նիհարք :



Շարժմամբ պատահած հի-
ւանդութիւնք հանգստեամբ կը
բուժին :



Սաբա կոչուած հիւանդու-
թիւնը երբեմն տարիքն առնե-
լով կամ կլիմայի փոփոխու-
թեամբ կը բուժի :



Եթէ կեանքդ չես ուզեր
դառնացնել հող եւ բարկու-
թիւն մտքէդ արտաքսէ :



Չափաւոր լեր խմելիքնե-
րուդ մէջ եւ ընթրիքդ առատ
չլլայ :



Կերակուրէն ետեւ շարժում
ըրէ , եւ ցերեկուան պահուն
բնաւ մի քնանար :



Կերակրոյ ատեն եթէ ջուր
խմուի նախ ստամոքսն եւ ա-
պա կերակուրը կը պաղի եւ
մարմինն ալ կը վնասուի :



Աչաց կը վնասեն արեգա-
կան ճառագայթք , կրակ , փո-
շի , հով , ոգելից ըմպելիք ,
մուխ , լալ , կծու կերակուրք
եւ գիշերներն անքուն անցնելն :



Ծննդեանց մեծագոյն մասը
արական սեռին կը վերաբերի ,
սակայն աւելի շատ են մեռնող
արք քան կանայք , այո՛ , ասի
արգանդէն կսկսի , զի աւելի
յաճախ մեռեալ մանչ կը ծնի
քան աղջիկ :



Պատերազմներէ եւ համա-
ճարակ ախտերու ըրած կոտո-
րածներէ ետեւ աւելի շատ
մարդիկ կը ծնին :



Ժողովրդեան մը բազմանա-
լուն պատճառներն են , բարե-

կարգ կառավարութիւնք, ծաւալում վաճառականութեան եւ արուեստից, բարեշէն բնակարանք եւ քաղաք, մաքրութիւն, սննդեան ընտրութիւն, ֆիզիքական եւ բարոյական աշխիւ դաստիարակութիւն եւ ամուսնութիւն, չափաւորութիւն, պատուաստ, բարեկարգ հիւանդանոցք, որբանոցք, բանտք, բժիշկներու, մանկաբարձից եւ դեղավաճառաց վրայ հսկողութիւն եւ համաճարակ ակտերու դէմ միջոցներ:



Այն վնասները որ զեղխութենէ յառաջ են եկած միայն ժուժկալութեամբ կրնան բուժիլ:



Մարդս օրը երեք անգամէն

աւելի ուտելու չէ, այս կանոնը բացառութեան տակ կը դրնեն տարիք, կլիմայ եւ պատահմունք:



Աղտեղութիւնը եւ անմաքրութիւնը բնաւ չկրնար արդարանալ, զի ուր որ ջուր կայ հոն ամեն մէկը կրնայ մաքուր ըլլալ:



Հիւանդութեանց մեծագոյն մասը անմաքրութենէ կը ծագի:



Մարմնոյ եւ տան մէջ բնակող զանազան միջատներն մաքրութեամբ կարտաքսուին, բնութեան նպատակն է զմեզ ա-

նոնցմէ կրած նեղութեանց մի-
ջոցաւ մաքրասիրութեան մղել:



Փտաղուցիչ եւ սաստիկ ջեր-
մերուն պատճառներուն մին
անմաքրութիւնն է, զի սովորա-
բար այն մարդկանց մէջ կսկսի
որք աղտեղի բնակարանաց մէջ
բնակին, անմաքուր օդ շնչեն,
ապառոզ կերակուր ուտեն եւ
պիղծ հանդերձներ հագնին:



Անմաքուր մարդիկ աղբի
նման չենք կրնար մեր շրջա-
նէն հեռացնել, ուստի անոնք
որ իրենց առողջութեան նա-
խանձախնդիր են պէտք է աղ-
տեղի անձանց եւ նոցա բնա-
կարանաց շրջանէն հեռանան:



ԾԱՂԻԿ ԵՒ ՀԱՐՍԱՆԻԹ

Շատ մարդիկ խորհելով թէ
ծաղկի եւ հարսանիթի հիւան-
դութիւններ դեղերու միջոցաւ
չեն բժշկուիր, աս ախտերուն
համար բժիշկներու չեն դիմեր:
Բայց որովհետեւ այս ախտե-
րուն հետ երբեմն ուրիշ հի-
ւանդութիւններ ալ խառն կ'ըլ-
լան, սաոնց դարման ընելով
ախտին սաստկութիւնը թե-
թեցնելու համար, եւ որպէս
զի հիւանդը շատ տկարանա-
լով չընկճի, լաւագոյն է բժշ-
կի դիմել:

Երբ տղաք ծաղկէ կը բռն-
նուին, զանոնք շատ տաք պա-
հելու չէ, եիւղային կերակուր-
ներ տալու չէ անոնց, եւ բո-
լորովին բժշկուելէն առաջ դա-
նոնք բաղնիք տանելու չէ: Եթէ
հիւանդութիւնը հարսանիթ է,

ցուրտէ ու խոնաւութենէ ըզ-
 գուշութիւն պէտք է, եւ ա-
 ռանց եզի գիւրաւարս կերա-
 կութենք տալու է: Գարձեալ
 թամար հինարի կամ գինուց
 մոխիրի (գրքով թարթրք) ջուր:
 կամ աստուց նման դոխացուցիչ
 ջուրեր խոցնելու է հիւանդին,
 եւ աստք անցնելէն ետքը մին-
 չեւ տաանեւ հինց օր թոյց տա-
 լու չէ՝ որ հիւանդը լուսոյ
 նայի:

Երբ տղաք 2—3 ամսուսն
 կ'ըլլան ծնողք պարտական
 են զանոնք պատուաստել տալ,
 բայց Տաճկաստանի մէջ շատ
 տղաք ծնողաց անհոյութեամ-
 բը չպատուաստուելով ամէն
 աքի ծաղկէ կը մեռնին:

Պատուաստուած տղայք եր-
 բեմն կրկին ծաղկի կը հանեն,
 աս պատճառաւ ոմանք պատ-
 ուաստն անօգուտ կը համարին:

Պատուաստ եղողներուն ծաղկէ
 քոնուելը սովորական չէ, եր-
 քեմն միայն կը պատահի, ինչ-
 պէս ծաղկի հանողներն ալ եր-
 քեմն երկրորդ եւ երրորդ ան-
 գամ կը հանեն: Աս գիտնալով
 պատուաստուած անձինք ծաղ-
 կի հիւանդութենէ բռնուած-
 ներէ շատ զգուշանալու են:
 Ինչու որ ծաղկի հիւանդու-
 թիւնը շատ տարափոխիկ է:

Քաղքի մը մէջ ծաղկի հիւան-
 դութեան երեւան ելած ատեն
 օմանք չպատուաստուած տղաք
 պատուաստելը վտանգաւոր
 համարելով, ընելու կը վախ-
 նան, բայց աս վախն անհիմն
 է: Արդարեւ աղէկ է որ տղաք
 պատուաստուին քաղքին մէջ
 ծաղկի հիւանդութիւն չեղած
 ատենը, բայց եթէ տղայ մը
 պատուաստուած չէ, լաւա-
 գոյն է զանի այն ատեն ալ

պատուաստել քան թէ այն հիւ-
 ւանդութեան վտանգին են-
 թակայընել: Պատուաստը տա-
 րւոյն ամէն եղանակին մէջ
 կրնայ ըլլալ, բայց դարնան ու
 աշնան եղանակներն աւելի յար-
 մար են այս բանին: Ոմանք
 ազոց հրկու թեւն ալ պատ-
 ուաստել լաւ կը համարին: Բժիշկներէն շատերուն խօսքին
 նայելով, պատուաստը Տ կամ
 տասը տարին անգամ մը կրրկ-
 նելու է:

Երբեմն ծաղկի հիւանդու-
 թեան ատեն պատուաստի նիւ-
 թը չի գտնուիր: այսպիսի գէպ-
 քի մէջ ծաղկի ունեցող ազու
 մը հիւանդութեան 7 կամ 8 ե-
 րորդ օրը գրչի մը ծայրով անոր
 հանած ծաղիկէն քիչ մը շարաւ
 առնելով, եւ կովի մը ծիծն
 ածելով մը այնչափ միայն գը-
 ծելով որ քիչ մը արիւն ելլէ:

(Եթէ արիւնը շատ ելլէ պատ-
 ուաստը չընեն), առնուած
 շարաւը վէրքին վրայ բաւա-
 կան քսելու է, եւ վրան քիչ
 մը մօմազօծ կտաւ (մուշամպա)
 դնելու է: Չորրորդ օրը պատ-
 ուաստին տեղը քիչ մը կարմ-
 րութիւն կը գտնուի, եօթնե-
 րորդ օրը խաղաւարտ կ'ըլլայ:
 Եթէ խաղաւարտը գոգաւոր ըլ-
 լայ եւ բոլորափքը կարմրած է,
 պատուաստը աղէկ կը համար-
 ուի: Այս խաղաւարտին շա-
 րուէն առնելով աղաք պատ-
 ուաստելու է:

ԿԱԹՆԱԿԵՐ ՏՂԱՔ ՄՆՈՒՅԱՆԵԼ

1. Երբ օդը ջերմ է, աղան
 օրն անգամ մը գաղջ ջուրը խո-
 թելով լուա: Եթէ աղան տկար
 է, լուա դանի դուրսէն օրն

անդամ մը գաղջ ջրով կամ քա-
ցախով խառնուած գաղջ ջրով:
Յուրտ եղանակի մէջ ալ տղան
ստակ լուալու է, բայց տաք
սենեկի մէջ, ուր տղուն պազ
առնելու վտանգ չկայ: Տղոց
առողջութիւնը շատ կախուած
ունի անոնց մաքրութենէն:

2. Ձգուշայիր տղան պինտ
կապելէ, Անոր զգեստներն այն-
պէս լայն ըրէ որ անիկա կա-
րող ըլլայ ազատօրէն շարժել
իր անդամները: Եթէ հնար է,
գիշերները փոխէ տղուն հան-
դերձները: Անոր ազանեկիքը
միշտ մաքուր եւ չոր բռնէ:

3. Տղան առանձին անկողին
պառկելու է: Մասնաւոր ժա-
մեր որոշելու եւ տղան այն
ժամերուն պառկեցնելու է, եւ
նայելու է որ անիկա գրկի վրայ
քնանալէն առաջ անկողին կամ
որրոց գրուի: Առանց բժշկի

հրամանին տղուն դեղ մի տար:
Եթէ տղան քեղ կը ձանձրացնէ
եւ չի քնանար, անիկա անօթի
է եւ կամ հիւանդ մի ջանար
լուեցնել զանի՝ շտքօրեղէն կամ
քտքտր տալով, քանզի այս
բաները շատ անդամ անոր ու-
րովայնաւուծութիւն կամ ու-
րիշ տկարութիւն կու տան:

4. Տղուն մաքուր օդ առնել
տուր, եւ մանաւանդ առտու
իրիկուն հասէ զանի դրան առ-
ջեւ: Չափազանց տաքը մանր
տղոյ կենացը կը մնասէ: Երբ
տղան տաքէն կը նեղուի, խըմ-
ցուր անոր զով ջուր որչափ որ
կ'ուղէ:

5. Տունդ մաքուր եւ հօփա-
տուն բռնէ: Եթէ հարկ է, գար-
նան ատեն, տան պատերը բը-
ռել տուր, եւ նայէ որ մատանը
կամ նկուղները միշտ մաքուր
եւ աւլուած պահուին: Լուա-

լիք (հորնա), ճեմիչ (ժոճա),
կոյանոց (լաղճ) եւ ասոնց նման
տեղեր գոց եւ մաքուր ըլլան:

6. Մարդու կաթիլ որոց ասնէն
շարժար ուղեւէն է: Եթէ ասիկա
առատ է, եւ տղան անով առաջ
կու գայ, ուրիշ տեսակ ուտե-
լիք տալու չէ, մանաւանդ տաք
եղանակի մէջ: Եթէ մայրը բա-
ւական կաթ չունի, պէտք չէ
տղան կաթէն կարել, այլ անոր,
իր կաթին հետ մէկտեղ, այծի
կամ կովու կաթ ալ տալու է:
Տղուն ցորեկը երկու կամ երեք
ժամն անգամ մը կաթ տուր,
իսկ գիշերներն՝ այնչափ քիչ
անգամ որչափ հնար է: Տղան
կուրծքիդ վրայ նիրհելուն պէս՝
ծիծը բերնէն առ: Չզուշացիր
ծիծ տալ տղուն, երբ շատ յոգ-
նած կամ քրտնած ես:

7. Եթէ, դժբախտութեամբ,
տղան առանց մօր կաթի սը-

նուցուի, անոր կաթ միայն
տալու է. այծի կաթը լաւա-
գոյն է, անկէ ետքը կու գայ
կովի կաթը: Տարւոյն բոլոր
եղանակներուն մէջ, բայց
մանաւանդ ամառը, կաթէն
ուրիշ բան տալ ազահով չէ
տղու մը համար որ դեռ առ-
ջուի ակոսներն հանած չէ:
Այսպէսէ մանր որոց կերակուրի
համար արարող, փարսիք, հաց,
և ասոնց նման բաներ որտեղ չէ:

8. Տղու մը տրուելու կաթին
մէջ քիչ մը սպիտակ մաքուր
շաքար խառնելու է որ կաթն
անուշնայ: Եթէ կաթը զուտ է,
կրնայ մէկ չորրորդին չափ տաք
ջուր խառնուիլ մէջը: Տաք ե-
ղանակներուն կաթը կրնայ
պաղ տրուիլ: Կաթը նոր, եւ
առաւօտուն կանուխ կթուած
ըլլալու է: Կաթին ամանը ե-
րայեւ ջրով լուալէն ետքը կա-

Թը մէջը լեցունելու է, եւ կաթը գալուն պէս շուտով եռացնելէն ետքը տանը մէջ զով անդ մը պահելու է :

9. Շիշը որմէ տղան կը ծծէ՝ շատ մաքուր պահելու է, ապա թէ ոչ կաթը կը թթուի, եւ տղան կը հիւանդանայ :

10. Տղան կաթէն կտրելու չէ տաք եղանակէն անմիջապէս առաջ կամ այն եղանակին մէջ, ոչ ալ ընդհանրապէս, մինչեւ երկրորդ ամառուան վերջը : Եթէ ծիծ տալ ծանր կու գայ տղուն մօրը, տղան կաթէն առանց կտրելու բոլորովին կրնայ անոր այծի կամ կովու կաթ տալ : Թէ եւ մօրը կաթն ատաւ չէ, եթէ տղան այն կաթէն կ'ախտորէ, մայրը ջանալու է բոլորովին չցամաքեցնել իր կաթը իրր գարման հիւանդութեան, քանզի շատ

անգամ մօրը կաթը կ'աղատէ տղուն կեանքը, երբ ուրիշ միջոցներ օգուտ չեն ընեն : Երբ տղան վեց ամսական է, մայրը կրնայ, կաթ տալով չտկարանալու համար, տղան օրը երկու կամ երեք անգամ օթեկ (սոյսթ) հացիւ եւ կաթով սընուցանել, բայց անատեն հացը շատ մանր բրդուած եւ կաթին մէջ աղէկ մը կակղացած ըլլալու է : Երբ տղան ութամսեայ կամ մէկ տարեկան է, կրնայ օրն անգամ մը թարմ եւ թեթեւ եփուած հաւկիթ ուտել, կամ նաեւ եղան եւ կամ սշխարի մսի արդանակ, որուն մէջ օթեկ հաց բրդուած է : Եթէ տղան տարունէ մը աւելի մեծ է, կրնայ աղէկ եփուած միս ալ ուտել, բայց անատեն ալ կաթ պիտի ըլլայ անոր զըլխաւոր կերակուրը :

ՕԳՏԱԿԱՐ ԴԵՂ ՄԸ

Թուճաւոր միջատներուն ,
 մեղուներուն եւ ուրիշ ճճեաց ,
 ինչպէս նաեւ օձերու խայթ-
 ուածներուն ցաւը եւ մնասա-
 կար հետեւանքը մեղմացնելու
 ամենէն դիւրին եւ լաւագոյն
 միջոցն է՝ խայթուածին վրայ
 շաղախի կամ ցեխի լախ մը
 դնել :

ՄԱՔՈՒՐ ԶՈՒՐ ԵՒ ՄԱՂՁԱՅԱԻ

Ժամանակ մը առաջ Հնդկաս-
 տանի Պօմպայ քաղաքը մաղ-
 ճացաւ կամ հնտախա կոչուած
 ժանտախտն ամէն տարի սաս-
 տիկ կոտորած կ'ընէր : Քանի մը
 տարի առաջ Անգղիացի կառա-
 վարիչը խմելու մաքուր ջուր
 հայթայթեց քաղքին, եւ անկէ
 ի վեր յիշեալ ախտը կոտորած

ընելէ զաղրեցաւ : Ախտը եր-
 բեմն ուրիշ տեղերէ հոն կը բեր-
 ուի եւ քանի մը մահ կը պատ-
 ճառէ, բայց երբէք ընդհանուր
 եւ տիրող չըլլար : Ասկէ կը տես-
 նուի որ անմաքութիւնն չպա-
 րունակող խմելու մաքուր ջու-
 րը, քաղքի մը առողջապահու-
 թեանը համար որչափ կարե-
 ւոր է :

ՅԱԻԱՔԻՆ ՎԵՐՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԴԵՂ ՄԸ

Ամանի մը մէջ կրակ լեցուր
 եւ անոր վրայ հասարակ շա-
 քարի փոշի ցանէ, ու վէրքը
 ծուխին վրայ բռնէ : Քանի մը
 բոպէ ետքը ցաւը անցնելով
 վէրքն ալ կը սկսի աղէկնալ :
 Այս դեղին նկատմամբ անձի մը
 կողմանէ հետեւեալ վկայու-

թիւնը տրուած է : Անգամ մը
 ուրբիս խաթին տակը ժանդոս
 բեւեռ մը միտւեցաւ : Եւ խիստ
 գէշ վերք մը քայտաւ : Յար ու
 ջիգերուն գբոյուեմը սաստիկ
 էր : Երբ մերոյիշեալ ծախին
 բանեցի, ցար բոյորովին գաղ-
 բեցաւ, ու հանդստանալով նո-
 բէն գործս շարունակեցի : Աւ-
 բիշներուն ալ սա քանը ապրու-
 պրած, ու նոյն հետեւու թիւնը
 տեսած եմ : Անգամ մը մէկուն
 մէկ մատին եղունդը վիրաւոր-
 ուեցաւ, եւ ցար հարկաւ խիստ
 սաստիկ էր, քայք քսան բոպէ
 շտքարին ծռխին քանուելով
 ցար դադրեցաւ :

ԿԱՂԱՄԲԻ ՏԵՐԵԻՆԵՐՈՒ ԳՈՐ-
 ԾԱԾՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴՈՒ-
 ԹԵԱՆՑ ՄԷՋ
 Անուանի Գաղղիացի բժիշկ

մը խրատ կու տայ կաղամբի տե-
 րեւ գնեյ կեղերու եւ վերքերու
 վրայ : Ապամբը նախ մորթը
 կը կակղոյնէ, եւ ապա կեղն ալ
 կակղոյնելով կը հասոյնէ : Սյս
 միջոցով կեղ կամ վերք շատ
 անգամ աւելի աղէկ կը բժըշ-
 կուի քան ուրիշ գեղերով :
 Քանզի կաղամբը պարար յա-
 ռաջ բերող միասակար նիւթը
 կամ խղիսայթը գուրս կրհանէ
 մարմինէն : Ապամբի տերեւով
 քժշկուած կեղերու եւ վերքե-
 րու սպին ալ փոքր կըլլայ :
 այս պատճառաւ յիշեալ տուն-
 կին գործածու թիւնը շատ օղ-
 տակար է ծաղկի, վարդախտի
 եւ հարսանիքի հիւանդու-
 թեանց մէջ :

ԾԱՂԿԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ
 Լոնտոն հրատարակուած քր-

ժըշկական տեսարակի մը մէջ,
 ծաղկի հիւանդութենէ բռնու-
 ողներուն հետեւեալ զոուշու-
 թիւնը կը պատուիրուի Յիշեալ
 ախտէն բռնուող մը գրուելու
 է մութ սենեկի մը մէջ ուր
 բացի ճրագի լուսէն ուրիշ լոյս
 չմանէ: Տեսարակը գրողը կ'ըսէ
 թէ այս կերպով հիւանդու-
 թեան սաստկութեան առաջը
 կ'առնուի, ծաղկի պալարնե-
 րուն մէջտեղը եղած մորթը
 բորբոքմանէ կը պահուի, հի-
 ւանդին երեսին վրայ պալար-
 ները թանձր կեղեւ չեն կա-
 պեր, մարմաջում, ցաւ եւ դար-
 շահոտութիւն ալ շատ նուազ
 կ'ըլլայ:

ԿԵՂԵՐՈՒ ԴԱՐՄԱՆ

Անդղիերէն թերթ մը կը պատ-
 մէ թէ ինչպէս դարմանուեցաւ

գէշ տեսակ կեղ մը, որմէ կին
 մը կը շարձարուէր տասը տա-
 րիէ 'ի վեր: Խեղճ կինը շատ
 բժիշկներու օգնութեանը դի-
 մեց, բայց 'ի դուրս Վերջապէս
 գործածուած դեղերէն ամենե-
 ւին օգուտ մը չտեսնելով, ըս-
 կըսաւ կեղերուն վրայ չորցած
 եւ փոշի եղած կաւ կապել:
 Այս դարմանին առաջին ար-
 դիւնքը եղաւ ցաւերը մեղմա-
 ցընել եւ բորբոքման առաջն
 առնել: Վեց ամիս շարունակ
 նոյն միջոցը գործածելով, կի-
 նը կեղերէն բոլորովին բժըշ-
 կուեցաւ, այնպէս որ սպի մը
 անգամ չմնաց մարմնոյն վրայ-
 եւ սրունգը որ առաջ կար-
 կամեալ եւ կաղ էր, ետքը տը-
 դու մը սրունդին պէս դիւ-
 րաշարժ եղաւ: Յիշեալ կինը
 իբր 40 տարեկան է:
 Նշանակուած չէ թէ կտը

կեղերուն վրայ ինչ կերպով կը
գնէր. բայց կը կարծուի թէ
անկէ մաս մը կը կապէր ուղ-
ղակի կեղերուն վրայ, եւ երբ
այն մասն իր ազդեցութիւնը
կորսնցուցած կը թուէր, առաջ
գրուածը վերցնելով վէրքը կը
լուար, եւ նոր կաւ կը գնէր:

ՋԵՐՄ

Ջերմը որ երկրիս շատ կող-
մերը կը տիրէ՝ ընդհանրապէս
այն անդերուն օդին վնասա-
կար մէկ յատկութեանը կ'ըն-
ծացուի, եւ կամ օդին մէջ
ցտնուած վնասակար նիւթե-
րուն ազդեցութեանն կը կար-
ծուի: Արտուի թէ գիտան
մարդիկ դիտելով գտած են որ
այն վնասակար նիւթերը գոյ-
ծարանաւոր եւ կենսաւոր բայց

շատ մանր մարմիններ են, ու-
րոնք հազիւ խոշորացուցով
անծնել ճար է: Սակայն գեռ
գիացուած չէ թէ այն մանր
մարմինք փոքր փոքր ճճիւններ
են թէ անկային նիւթեր: Ա-
սոնց քննութիւնը սա կերպով
եղած է. գիտողութիւն լնու-
ները ջերմութեան անդուց մը օդու-
վը լեցուն շիշ մը, բերանը բզ-
գուչութեամբ գոցելով, կը
տանին անկէ շատ հեռու անդ
մը ուր աննդ չկայ, եւ հոն
գոց սենեկի մը մէջ շիշին բե-
քանը կը բանան, այնպէս որ
քանի մը փամուռ մէջ շիշին օդը
սենեկին օդին հետ խառնուի:
Ասոր հետեւանքը սա եղած է
որ այն սենեկին մէջ շարու-
նակ կեցողը ջերմութեան անու-
ած է, եւ խոշորացուցով դիտուելով
անոր լեզուին վրայ յիշեալ
մանր մանր վնասակար մար-

մինններէն տեսնուած է . ասոնք
այն սենեկին օդին մէջն ալ
դիտուած են , թէպէտ տեղ-
ւոյն կամ քաղքին օդը յիշեալ
սենեկէն դուրս ուրիշ տեղեր
այն վնասակար խառնուրդէն
ազատ դանուած է բոլորովին :

Սա ալ ստուգուած է փոր-
ձով որ , ջերմութիւնը յիշեալ
մարմինները մթնոլորտին բար-
ձրր գաւառներուն մէջ կը ցըր-
ուէ կամ կը ծաւալէ . իսկ ցուր-
տըն , բնդհակառակն , զանոնք
խտացնելով գետին իջնելու կը
ստիպէ : Այս է պատճառը որ
ջերմը սովորաբար չի պատահիր
ամառուան այրող տաքերուն
ատենը , ոչ ալ ձմեռը երբ ցուր-
տը սաստիկ է , այլ տարւոյն
բարեխառն եղանակներուն մէջ
մինչ օդը ոչ շատ տաք ոչ ալ
շատ ցուրտ ըլլալով , վերոյիշ-
եալ վնասակար նիւթերը միա-

համուռ մթնոլորտին վարի մա-
սերուն մէջ կը գտնուին . քան-
զի ոչ տաքէն դէպ ի վեր տա-
րածուած , ոչ ալ ցուրտէն դէպ
ի գետին իջած են : Օրուան ա-
մենէն վտանգաւոր ժամանակն
ալ ոչ կէս օրն է , երբ արեգա-
կան ջերմութիւնը կը տաքցնէ
եւ կը ծաւալէ օդը , ոչ ալ կէս
գիշերուան ժամերն են , երբ
օդին զովութիւնը յիշեալ վնա-
սակար նիւթերը գետին իջնե-
լու կը ստիպէ , այլ արեգական
ծագելուն եւ մանելուն մօտ
ժամանակներն են վնասակար ,
քանզի յիշեալ ախտաբեր նիւ-
թերն այն ատեն մթնոլորտին
ստորին մասին մէջ հաւաք-
ուած կը գտնուին :

Ուստի ջերմուտ երկիրներ
բնակող կամ ճամբորդութիւն
ընողները պէտք է որ արեգա-
կան մանելէն ժամ մը կամ ժամ

ու կէս առաջ տուն մը մըանեւ լով պատասխարութիւն, եւ արեւ-
 դակին ելլելէն մինչեւ ժամ մը
 կամ ժամ ու կէս ետքը դուրս
 բաց օդի մէջ շնչեկն. սենեկին
 մէջ ալ ուր կը պատրաստութիւն
 կրակ վառեն: Տենդիւ վարա-
 կեալ անզեր առաւօտուն կամ
 իրիկուան օդին ազդեցութիւնը
 մարդու աւելի վնասակար է
 քան թէ միջառուր սօթին ու
 կէս դիշերուան ցրտութիւնը:

ԱՄՈՒՆԱՅԵԱԼ ԵՒ ԱՐՈՒՐԻ ԱՆՉԱՆՑ ՄԷՋ
 ՍԵՌԵԼՈՅ ԹԻՒԵՐՈՒՆ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Փարիզու բժշկական ճէմա-
 րանին կողմէն հրատարակուած
 աւարակ մը ամուսնացեալ եւ
 ամուրի արանց եւ կանանց մէջ
 մեռնողներուն թուոյն նկատու-
 մամբ հետեւեալ բաղդատա-
 կան հաշիւը կուտայ: Սյս հա-

շիւը Քաղզիոյ, շորանտայի,
 եւ Բեզգիոյ վիճակագրու-
 թիւններէն հանուած է:

Ուր որ 20 էն մինչեւ 33
 տարեկան 4000 կանամբեաց
 (կնիկ ունեցող արանց) մէջ 6
 մեռնող պատահած է, հոն նոյն
 տարիքն ունեցող նոյնչափ
 թուով ամուրի կնու չամուս-
 նացեալ) արանց մէջ եղած է
 40 մեռնող, իսկ այրեաց մէջ
 (անսնց՝ որանց կանայք մեռած
 էին) մեռնողներուն թիւն ե-
 դած է 1000 ին 22, Քարձեալ
 հազար հոգւոյ մէջ, 33 էն
 մինչեւ 40 տարեկան եղողնե-
 րէն մեռած են 7 կամ 8 կա-
 նամբ, 13 ամուրի եւ 17 կամ
 18 այրի:

Կանանց նկատման կը ալ նոյն-
 պէս փորձիւ անստանալ է որ
 անսականայք (այր ունեցող
 կանայք) աւելի երկայնակեաց

եղած են քան դամուրիս, բայց ոչ այնչափ որչափ արանց մէջ. Ջորօրինակ՝ 30 էն մինչեւ 35 տարեկան եղող 1000 առնականանց մէջ մեռած է 9 հոգի նոյնչափ եւ նոյն տարիքն ունեցող ամուրի կանանց մէջ 11 հոգի միայն մեռած է: Առնակին եւ ամուրի կանանցմէ մեռնողներուն թուոյն մէջ տեղ տեսնուած այս տարբերութիւնը կ'աւելնայ, որչափ որ կանայք կը ծերանան: Այսպէս ուր որ 50 էն մինչեւ 55 տարեկան եղող առնականանց մէջ 15 կամ 16 մեռեալ պատահած է, հոն նոյնչափ եւ նոյն տարիքն ունեցող ամուրի կանանց մէջ պատահած է 26 կամ 27 մեռեալ: 55 տարեկանէն ետքն ալ մեռնողներուն թիւը միշտ նուազ եղած է ամուսնացելոց քան ամուրեաց մէջ: Բայց 20 կամ

25 տարեկանէն առաջ եղած ամուսնութիւնք միշտ փաստակար գտնուած են: Ջորօրինակ եթէ 15 եւ 20 տարեկան հասակներուն մէջ տեղ ամուսնացեալ կանանց 1000 ին 12ը մեռած է, ամուրիներէն մեռած է 1000 ին 7 կամ 8 միայն: Իսկ 20 եւ 25 տարեկան հասակներուն մէջ տեղ ամուսնացեալներէն եթէ 1000 ին 10 մեռած է, ամուրիներէն մեռած է 8 կամ 9:

Այս հաշուէն յայտնի կը տեսնուի որ ամուսնութիւնն օգտակար է առողջութեան եւ երկայնակեցութեան, եթէ յարմար տարիքի մէջ կ'ըլլայ. իսկ եթէ տհաս հասակի մէջ կ'ըլլայ, շատ փաստակար է:

18200 900.

23 փաստակար փայտաւոր ցիլար

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ՈՉԻԱՐՆԵՐՈՒ ՍԱՏԱԿՈՒԾ

Օգոստոս եւ Սեպտեմբեր ամսոց մէջ տեսակ մը ճանճ ոչխարաց քթին մէջ հաւկիթ անելով հոն որդեր կը գոյանան. ասոնք յետոյ ուղեղին մէջ մանուկով շատ ոչխարաց սատակման պատճառ լինին: Ոչխարք այս վտանդէն ազատ պահելու համար քթերնին կպրածիւթ քսելու է: Ասի ոչխարք ինքնիրեննուռն կլնեն եթէ տախտակի վրայ կամ տաշտի մը մէջ կպրածիւթ դնենք եւ վրան բարսկ աղ զաննք ոչխարք կուզան եւ ասի կը լզեն:

ԿԱԹ ՊԱՀԵԼ

Կաթը տափակ ամանի էջ

լեղնելով մեղմ կրակի վրայ շոգիացնելով չորցուր ու վոռի ընելով շիշի մէջ պարսպէ, եւ ուզած ատեն հետը ջուր խառնելով գործածէ. կամ թարմ կաթը շիշերու մէջ լից եւ թոյլ կերպով խցէ, յետոյ սոյն շիշերն պաղ ջրով լի խալկինի մը մէջ շարէ ու կրակի վրայ դնելով թող որ ջուրը եռայ: Եփելէն 3 բոպէ յետոյ շիշերն խալկինէն հանէ եւ խցաններն ալ լաւ մը սեղմելով, եւ կապելով նորէն խալկինին մէջ դիր որ կամաց կամաց պաղին: Այս շիշերն աման առնազով սեղը պահէ: Եփած ատեն խալկինին մէջ քիչ մը յարդ դիր որ շիշերն չճաթին:

ՊՏՈՒՂ ՊԱՀԵԼ

Խաղողը ողկոյղէն պահելու

անօթին մէջ այնպէս կախէ որ
բնաւ բանի մը չ'դպչի, յետոյ
անօթը սղոցի մաքաւ փոշիով
լից եւ անօթը դոցէ ու խցէ:
Ուրիշ պտուղներն ալ մի ան
մի անօթին մէջ այնպէս դե-
տեղելու եւ փոշիով ծածկելու
է որ միմեանց չ'դպչին:

ՄԱՌՈՅ ՎԷՐՔԵՐՆ ԲՈՒԾԵԼ

Կաւիճ 4 մաս, կարածիւթ
2 մաս եւ աղիւսի փոշի 1 մաս
միմեանց հետ խառնելով տաք
տաք ծառոց վերքերուն քսէ:

ՀՈՒՆՏ ՊԱՀԵԼ

Մեղրի մէջ պահուած հուն-
տերն եւ սերմունք հեռաւոր
տեղեր կրնան տարուիլ առանց
զօրութիւննին կորսնցնելու:

ՄԱՌՈՅ ՈՐԴԵՐՆ ԶՆՋԵԼ

Ծմբոյ ծաղկի 1 մասը 3 մաս
քօլայի հետ խառնէ եւ վրան
ջուր լեցնելով թանձրաթան մը
չինէ եւ վրձինով ծառերուն
քսէ:

ՀՈՒՆՏԵՐՆ ԶՕՐԱՅՆԵԼ

Նիթրաթ աը բոթասի 1 մա-
սը աղքակոյտին ջրայն 13 մա-
սին հետ խառնելով սերմերն
ու հունտերն մէջը թըջոց դիր:

ՁԻԵՐՈՒՆ ԱԶՔԻՆ ՎԻՃԱԿՆ

ՔՆՆԵԼ

Մութ անդ մը ձիուն աչաց
բիրին մեծութիւն քննէ յետոյ
զանի կամաց կամաց զօրաւոր

չուսոյ մէջ տար, եթէ աչաց
բիրը պղտիկնայ ձին կոյր չէ :

ԽԽՈՒՆՋՆԵՐ ԶՆՃԵԼ

Յորենի յարգն լաւ ջարդե-
լու բուսոց շուրջը ցանէ :

ՈՐԹԻ ՄԻՋԱՏՆԵՐՆ ԶՆՃԵԼ

Աճառ 2 մաս, ծծումբի ծա-
րիկ 2 մաս եւ ծխախոտի փո-
շի 2 մաս քանի մը օգա ջրոյ
մէջ կէս ժամ եռացուր եւ
քաղջ եղած ատեն որթին քսէ :

ՋԻՆԵՐԷՆ ԶԱՆՃԵՐՆ ՎԱՆԵԼ

Կաղնիի տերեւներէն 2-3
ափ գիշեր մը ջրոյ մէջ ձգէ,
առտուն 1 ժամ եռացուր եւ

պաղելէն ետեւ երբ ձիերն ա-
խոռէն դուրս պիտի հանես
սոյն հեղուկէն սպուռնդով ա-
նտեց վրայ քսէ :

Պատի քով տնկուած ծառոց
պտուղներն շուտ հասցնելու
համար պատը սեւ ներկէ :

ԾԱՌՈՅ ՊՏՈՒՂՆԵՐՆ ՄՈՒԿԵՐԷՆ
ՈՒ ՃՃԻՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ

Տերեւոց անկման ատեն ծա-
ռոց արմատին շուրջը 6-8 մատ-
նաչափ փոքելով մէջը կարգ մը
կիր եւ կարգ մը մսիփր լից,
յետոյ վրան հող լեցնելով լաւ
մը կոխէ :

ՀԱԻԿԻԹ ՊԱՀԵԼ

Քարէ տաշափ մէջ կարգ մը

աղ ցանկ (կէս մատ թանձր) եւ հաւկիթներն սուր ծայրերէն այդ աղին վրայ շարէ, յետոյ դանոնք աղով ծածկէ: Եթէ հաւկիթներն թարմ են եւ պահուած տեղն ալ պաղ է մինչեւ հետեւեալ ամառ մնան: Կամ չմարած կիրն ՉՅԵ տրամ աղի եւ 64 տրամ քրրում թարթարի հետ խառնելով թանձրաթան շինէ եւ հաւկիթներն մէջը դիր:

ՊՏՈՒՂ ՊԱՀԵԼ

Պտուղը եթէ մաքուր, չոր յարդի մէջ անյնպէս պահուին որ իրարու չհպչին կրնան պահուիլ:

ԾԱՌՈՅ ՄԻՋԱՏՆԵՐՆ ԶՆՋԵԼ
Միջատներուն բոյնին բերանը աճառով խցէ:



Մեծ եւ փոքր կարի մաքիւնաներ կը ծախուին Ղալաթիա Մինասեանց մաղաղան թիւ 65

ԴԵՂՁԻ ԾԱՌ

Եթէ 8 տրամ Սայրէթրը եւ 56 տրամ աղը ջրով խառնելով 7 տարեկան դեղձենիին բունին շուրջը սրսկուի որդերէ զերծ մնալէ զատ առատ եւ ազնիւ պտուղ կը հասցնէ :

ՀԱԻԿԻԹ ՊԱՀԵԼ

Այաբիոյ խէժին լուծումը վրձինով հաւկիթներուն կեղեւին վրայ քսէ , չորցուր եւ անուխի փոշիի մէջ պահէ :

ԻԻՂ ՄԱՔՐԵԼ

Երկու օգա ճարպին կամ իւղին համար 4 լաւ բաթածէս առ , սակէ , լուա ու բարակ շերտերու կտրէ . իւղը հալեցնելէ ետեւ , երբ նա լաւ տաք է , շերտերն մէջը նետէ եւ թող մէջը մնան մինչեւ որ

դոյներնին թխանայ . յետոյ վերայի փրփուրն վերցնելով իւղը անօթի մը մէջ լից որ պաղի :

ԿԱԹԸ ԹԹՈՒԵԼԷ ՊԱՀԵԼ

Ռուսաստանի մէջ ամառը շատ տաք եղած տեղերն երկրագործը կաթին մէջ քանի մը կաթիլ ծովային փողկի թարմ հիւթն կաթեցնելով լաւ մը կը խառնեն . կաթը այսպէս թարմ կը մնայ :

ԲՈՍՐՈՐ (ՔԻԻՏԼԷՆՄԷՔ)

Երչիկ , ապուխտ եւ այլ ատնց նման ուտելիքներ բոսբորելէ պահելու համար ջրոյ մէջ անջրան աղ լեցնելու է որ աղի թանձրաթան մը ձեւանայ . ասի բոսբորած երչիկներուն վրայ

քսելու է. բոսորն անփիջա-
պէս անհետանայ եւ քանի մը
օրէն երչիկին վրայ կեզեւ մը
կը գոյանայ, որ զանի բոսորէ
կը պաշտպանէ: Ասի այլ բոս-
բորեայ ուտելիքներն եւս կա-
պահովէ:

ՈՁԻԱՐԱՅ ԲՈՒՐՂ

Չոր խոտ եւ գարի կամ եռու-
լաֆ ուտող սչխարաց տված
բուրդին մէջ մեծ ասորներու-
թիւն կայ. չոր խոտ ուտող ոչ-
խարը եթէ 3 օգա բուրդ (չը-
լրվացուած) տայ գարի ուտողն
4 օգա կուտայ. առաջինը հա-
րիւրին 2 իսկ վերջինը հարիւ-
րին 10 ճարպ կուտայ:

ՀՈՐԹԵՐՆ ԱՌԱՆՅ ԿԱԹԻ

ՄՆՈՒՅԱՆԵԼ

Հորթը ծնելէն մինչեւ 4 օր

մօրն կաթը վայելելու է, յե-
տոյ ետ լաֆի ալիւրն լաւ մա-
ղելով եփելու եւ հետո քիչ մը
սեւ շաքար խառնելով ասելու է.
հորթը սրքան մեծնայ այնքան
կերակրոյ չափն աւելցնելու է
եւ մէջն ալ մանր մանր կա-
նանջեղէն ջարդելու է. Ասի
եթէ հորթին փորճարութիւն
պատճառէ պէտք է չայլ գգալ
մը պատրաստեալ կաւիճ (Creta
prep.) տալ:

ՄԻՍԻ ՀԵՂՈՒԿ ՊԱՆԵԼ

Միսի հեզուկը շիշի մէջ լե-
ցընելով նորա պարսպ վիզը
բաժնակիով թոյլ խցելով քանի
մ'ամիս կը պահուի:

ՄԻՋԱՏՆԵՐ ԶԷՋԵԼ

16 լիպրախոտաբուխ ջրոյ հետ

լաւ խառնելով, երեկոյեան պահուն սոյն ջրով ծառոց ճիւղերն եւ տերեւներն ձեռքի ջրհանի մը միջոցաւ թրջելու է. հետեւեալ առաւօտուն միջատներն մեռեալ գետինը կիյնան: Յրէն կիւղիւմի առնկերուն վրա եթէ գիշերն բուրդէ լաթի կրտորներ դրուին, միջատներն անոնց վրայ կը քաշուին եւ առաւօտուն կանոնիս կրնան հաւաքուիլ: Կաղամբէն եւ շողգամէն միջատներն հեռու պահելու համար անոնց մօտերը կանեփ ցանելու է:

ՎԱՌԵԱԿՆԵՐՆ ԳԻՐՑՆԵԼ

Թէ վին ու բաթաթէան միմեանց հետ շաղուելով թանձրաթան շինելու եւ անով վառեակներն օրն 3 անգամ ար-

թըննալէ մէկ ժամ ետեւ կերակրելու է: Առաւօտեան եւ կէս օրուան կերակրուելէն ետեւ զանոնք մէկ ժամ մութ տեղ մը գոցելու է որ քնանան. երեկոյեան կերակուրէն ետեւ ալ մութ հաւնոցը դնելու է:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱԼՆԵԱՅ ՈՍԿՈՐ ԿՏՐԵԼ

Ձկանց ոսկորն քիչ մ'ատեն կանթեղին վրայ բռնէ, յետոյ մկրատով կրնաս կտրել զանի:

ԿՈՇԻԿՆԵՐ ԶՐԷ ԶԵՐԾ ՊԱՆԵԼ

Սեղրամօմն ոչխարի ճարպի հետ հալեցնելով կոշկաց կարերուն քսէ:

ՋՐՈՑ ԵՒ ՀՐՈՑ ԴԻՄԱՅՈՂ,
ՁԻՄԷՆԹՕ

Ձափ մը կաթի հետ նոսր չափ
քացախ խառնէ . ափ մածուն
լինի . զատէ թանձր մասն հե-
զուկէն , հեզուկին հետ 4—5
հաւկրիթ խառնէ , եւ ամենը լաւ
մը զարնելով միացնելէ ետեւ
վրան ա՛յնքան չմարած կիր
մաղէ որ թանձրանայ , Ասի
կոտրած ամաններն կպցնէ եւ
ջրոյ եւ հրոյ գիմանայ :

ԳԱՂՂԻԱԿԱՆ ՎԷՌՆԻՃ
ԿՈՇԿԱՅ

Առ $\frac{3}{4}$ լիտրա սրիթթօ , 5 լիտր-
ա ձերմակ գինի . $\frac{1}{2}$ լիտրա
սէնէկալի խէժի փոշի , 48 տը-
րամ ԿԵԼԷ չաքար , 16 տրամ
ձեծուած քիտոր , 32 տրամ

կանաչ արչասպ , Շաքարն ու
խէժն գինիին մէջ լուծէ , քա-
մէ եւ մեզմ հրոյ վրայ դիր ,
բայց նայէ որ չեփի . այս վի-
ճակիս մէջ քիտորն , արչասպն
ու սրիթթօն մէջը գիր , եւ 5
բոպէ լաւ խառնէ , վար ա՛ռ
կրակէն , եւ երբ գրէթէ պա-
ղած է Ֆանէլայէ մ՛անցնելով
շիշերու մէջ լից . Վրձինով
պէտք է կոշիւայ քսել :

ԱՐԾԱԹԻ ՎՐԱՅ ՍԵՒ ԳԻՐ

Այրած կապարն փոշի ըրէ
եւ ծծմբով խառնէ . երբ ներ-
կի թանձրութիւն կառնէ ար-
ծաթին վրայ գրէ , չորցու եւ
կրակին բռնելով տաքցու . գի-
րը բնաւ չաւրիր :

ՄՈՐԹԷ ՁԵՌՆՈՅՆԵՐՆ ԼՎԱԼ

Գաւաթ մը կաթի մէջ թուխ

աճառ դիր եւ ձեռնոցն չորս
 Խաչ ծալուած լաթի մը վրայ
 տարածելով Փանելայի մը կը-
 տորն վերոյիշեալ կաթին մէջ
 թաթխելով եւ օճառին վրայ
 լաւ մը քսելով ձեռնոցին վրայ
 չփէ մինչեւ որ եթէ նա ձեր-
 մակ է դեղնագոյն լինի, իսկ
 եթէ գունաւոր է թխագոյնի
 փոխուի, յետոյ չորցուր :

Ապակին պազ ջրով եթէ լը-
 վացուի, աւելի պայծառ լինի
 քան թէ տաք ջրով լվացուած
 ատեն :

Քար ունեցող մատնին ձեռ-
 քերն լվացուած ատեն հանե-
 լու է եթէ ոչ քարին դոյնը կը
 փոխուի :

Այն հանդերձարաններն , ու-
 բունց մէջ ցեց գանուի, պէտք
 է ծխախոտան ջրոյ մէջ եփելով
 եւ մէջը քամիուրի ոգի սըրս-
 կելով լաւ մը շիեւ :

Հրդեհէ վախած ատեն պէտք
 է գեանին վրայ սողալով եր-
 թալ, զի ծուխն սենեակին վե-
 րին մասն գրաւելով կանգուն
 ղերքով փախչողը կը խեղդէ :

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱԶԳԱԿԱՆՈՒ-
 ԹԻՒՆ ՄԸ

Ամերիկայի լրագիր մը հրա-
 տարակած է Բէնսիլուէնիոյ
 նահանգին քաղաքներէն մէ-
 կուն մէջ անձնասպան մար-
 դու մը խառնակ ազգականու-
 թեան պատմութիւնը, որ տա-
 րօրինակ, միանգամայն հետա-
 զըրքրական է : Այս պատմու-

Թիւնն առնուած է յիշեալ մար-
դուն գրութենէն որ անոր
մահուանէն ետքը սենեկին մէջ
գտնուեցաւ :

«Ես ամուսնանալով» կ'ըսէ
մարդը յիշեալ գրութեան մէջ,
«առի այրի կին մը որ շախա-
հաս աղջիկ մը ունէր : Հայրս
որ ստէյ կուգար մեր տունը
սիրելով իմ խորթ աղջիկս , ա-
մուսնացաւ անոր հետ : Այս-
պէս հայրս եղաւ իմ փեսաս ,
խորթ աղջիկս ալ եղաւ իմ
մօրուս (խորթ մայր) , քանզի
հօրս կին եղաւ : Ժամանակէ
մը ետքը կինս որդի մը ունե-
ցաւ . ասիկա հօրս աներձադը
իմ ալ մօրեղբայրս էր , քանզի
մօրուս եղբայրն էր : Հօրս
կինը , այսինքն իմ մօրուս ,
նոյնպէս որդի մը ունեցաւ .
ասիկա հարկաւ իմ եղբայրս
էր , միանգամայն իմ թոռս ,

քանզի խորթ աղջկանս որդին
էր : Սինս իմ հանիս (մամս) էր ,
քանզի մօրուս մայրն էր . ես
ալ կ'նոջս թէ՛ այրն էի եւ թէ
թոռ . եւ որովհետեւ անձի մը
հանւոյն այրը նոյն անձին հաւն
(տէտէն) է , ես իմ հաւս էի» :

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Անդդիոյ մէջ առննով օրէնք էր
որ կարգալ եւ գրել գիտցող
եղեանագործաց թողութիւն կը
չ'սորձուէր :

— Բողոնիոյ մէջ պահոց օրերն
միա ուտողին ակաւաններն կը
հանէին :

— Գաղղիոյ մէջ սուտ տեղն ամ-
բաստանութիւն ընողին քա-
սորդ ժամու չափ չորքոտանիք
պէս ձեռաց եւ ոտաց վրաց
քաղել եւ շան պէս հաշել կու-
տային :

— Գասթիլիոյ Ալֆօնս թագաւորը սուլտրութիւն ունէր ըսել . « հին վայտ վառելու համար , հին գրեանք ուսանելու համար , հին բարեկամներ առօրեայ տեսութեան համար եւ հին գլխի խմելու համար » :

— Սալձպուրկի թանգարանին մէջ թուր մը կայ որ ժէ դարուն կը վերաբերի որոյ վրայ գրուած է . « ո՛վ որ առանց կորսընցուցած ըլլալու բան մը կը դանէ եւ ո՛վ որ առանց գնած լինելու բան մը կը վաճառէ , նա առանց հիւանդ ըլլալու կը մեռնի » :

— Սշխարհիս բնակիչք 1000 էն աւելի կրօնից կը ծառայեն : Կանանց թիւը արանց թիւին գրեթէ կը համապատասխանէ . միջին հաշուով մարդս 33 տարեկան լինի : Մարդկանց 4րդ մասը 7 տարեկան լինելէ առաջ

կը մեռնի եւ կէսը 17 տարեկան ըլլալէ առաջ : 1000 մարդոց մէկը 100 տարեկան լինի , 500 ին մէկը 80 տարեկան , եւ 100 ին 6ը 65 տարեկան : Աշխարհիս բնակիչներուն 33 միլիօն 515 հազար 760 ը ամեն տարի 91 հազար 824ը ամեն օր , 3 հազար 30ը ամեն ժամ , եւ 60ը ամեն րոպէ կը մեռնին : Մեռնողներուն տեղը գրեթէ նոյնքան ծնելով հաւասարակչութիւն կը ստանա : Ամուսնացեալք աւելի երկար կեանք ունին քան ամուրիք : Կանայք աւելի յաճախ 50 տարեկան լինին քան արք , սակայն այս տարիքն անցնող կանայք աւելի շուտ կը մեռնին քան արք . մարդկանց 1000 ին գրեթէ 150ը ամուսնացեալ են : Գարնան եղանակին մէջ ծնողներն աւելի առողջ եւ զօրաւոր են քան

այլ ատեն ծնողներ: Մահը սո-
 փորաբար դիշերը կը պատահի:
 — շին ատեն աղը (լատ. սալ)
 այնքան շարդի էր որ «փարձք»
 դատին «աղաղին» (սալարիում)
 կրսէին: Հոգմայեցիք չէին ըսեր
 «հաց ճարել» այլ «աղ ճարել»:
 — Յայտնի է որ խցեալ շիշի մը
 մէջի ջուրը սառելով շիշն կը
 ճախճեցնէ. ասոր դարմանալի
 մի փորձն եղած է. 15 $\frac{1}{2}$ մատ-
 նաչափ տրամագծով եւ 2 $\frac{1}{2}$ մատ-
 նաչափ թանցրութեամբ երկա-
 թէ գունտի մը մէջ ջուր լեց-
 ուեցաւ եւ խցուելէն ետեւ
 խիտ պաղութեան հնթար-
 կուեցաւ. հազիւ թէ նորա
 մէջի ջուրն սառել սկսեց երբ
 գունտը պայթեցաւ եւ 50 օգա
 կշտող կտոր մը հեռուն նեա-
 ուեցաւ. այս երկաթի կտորն
 նետող զօրութիւնը 800 հազար
 օգա հաշուեցաւ:



Սօղա ի Ղալաթիա Մինասեանց
 Մաղազան:

Արբեալ Գողղիացին կը շա-
 տախօսէ, Գերմանացին կերդէ,
 Անդղիացին կը կուռի, Ամե-

բիկացին կը վիճի, իսկ արբեալ շա՞յը ինչ կընէ
 — Երկիրս իր թաւալման արագութիւնը կորսնցնելու վրայ է, որոյ պատճառաւ սա ի վերջոյ արեգական ծոցը պիտի իջնայ. ասի երբ պատահի արեգակն ու երկիրն միմեանց պիտի շիրուին, նոյն շփումէն 5 միլիոն աստիճան ջերմութիւն գոյանալով երկիրն պիտի հալի եւ շոգիանալով ոչընչանայ:

— Անդղիացին 26 տառ ունի, Գաղղիացին 25, Իտալացին 20, Գերմանացին 26, շայն 39, Սլաւոնը 43, Ռուսն 35, Լատինը 23, Յոյնը մինչ 403 Ն. Գ. ունէր 16 յետոյ 24, Եբրայեցին 22, Սրարը 28, Պարսիկը 22, Տաճիկը 28 եւ Սանսքրիթն 44:

— Սոխակին ձայնը մղոնին մէկ

տասնեւհինգերորդն կրնայ լրսուիլ. մարդս սոխակէն 15000 անգամ մեծ է, ուստի այս համեմատութեամբ մարդու ձայնը 1000 մղոն հեռու լսուելու էր.
 — Լուսն մէկ ցորեն չի կշռեր, եւ $1\frac{1}{2}$ կանգուն բարձր կրնայ ցատկել, եթէ 60 օդանոց մարդ մը լուին ճարպիկութիւնը ունենար Պօլսոյ Եանկըն Գուլէսիէն մէկ ցատկելուն քինաստան հասնելու եւ երկու քայլ առնելով բոլոր աշխարհն շրջագայելու էր:

— Երկաթուղիի կառք մը ժամը 40 մղոն երթալով 8 ամիսէն լուսնին կրնայ հասնիլ, $8\frac{1}{2}$ տարիէն Սրուսեակին, իսկ 260 տարիէն Սրեգական: Սրդ արեւին լոյսն 8 վայրկեանէն երկրին կը հասնի. ասկից երեւակայէ երկնային մարմնոց անհասկնալի հեռաւորութիւնը եւ

լուսոյ անիմանալի եւ աներեւակայելի արագութիւնը :

—Յիամի տէրութիւնը քաղաքականալու վրայ է . —ապացոյց— թագաւորը սկսեր է շապիկ հագնիլ եւ կարդալ սուլբիլ :



Երկրագործական գործիքներ
ի Ղալաթիա Մինասեանց Մա-
ղաղան :

—Երկրիս բնակչաց թիւը 1,288 միլիոն է , որոյ 360 միլիոնը Կովկասեանց ցեղին կը վերաբերի, 332 միլիոնը Մոնկոլեանց, 190 միլիոնը Եէթովպեանց, 176 միլիոնը Մալայանց եւ 1 միլիոնը Հնդկ—Սմերիկեանց, 3642 լեզու կը խօսուի աշխարհիս վրայ :

—Սրեգակը իւր շուրջն թարալող ամեն մոլորակներէն 740 անգամ ծանր է :

—Ղուսնոյ խաւարմունք գրեթէ երկրագնդին կէսին վրայ կը տեսնուին , իսկ արեգական խաւարմունք երկրիս փոքր մասին վրայ :

—40 մարդկանց արեան մէջ 15 օդանոց արոյր մը շինելու բաւական երկաթ կայ :

—Մարդուն ուղեղը իր մարմնոյն 28րդ մասն է , ձիունը իր մարմնոյն 400րդը :



BEAUTE ET JEUNESSE ETERNELLES.

Մազի ջուր ի Ղալաթիա Մխնասեանց

Ձգացմունք աստեղաց նմանին որք լոկ պայծառ գիշերներն զմեզ կառաջնորդեն. իսկ խելքը կողմնացոյց մ'է որ խաւարին մէջէն անգամ ուղիղ ճամբան մեզի ցոյց կուտայ :

— Ինչպէս որ մարդս իր սենեակին մէջ ալ վտանգաւոր կերպով կրնայ իյնալ, այնպէս ալ կրնայ սրտով եւ խորհուրդներով խիստ նուաստանալ :

— Շուները ու կեղծաւորներն շողոքորդութիւններով իրենց տէրերն ա'յնքան կալարտեն, որ 'ի վերջոյ անոնցմէ կից մը կրնդունին եւ անոնցմէ հեռանալ կը պարտաւորին :

— Ինչպէս որ ալեւր բոյորովին խաւարած ատեն գիշերունէ մութ կըլլայ, այնպէս ալ ազդեցութեան տէր մարդ

մը վատ ճանապարհաց մէջ
գտնուելով այլոց կործանմանը
պատճառ կրկայ :

— Երկչոտութիւնը ամենածանր
խիմարութիւններ ընել կուտայ
մարդուս :

— Բարկացած ատեն գործի ըս-
կըսողն փոթորիկի ատեն ծո-
վուն վրայ ճամբորդողի կը նը-
մանի :

— Բարի գործոց կը հետեւինք
այլոց հետ մրցելով, չար գոր-
ծոց կառաջնորդութիւնք մեր բը-
նութեան չարութենէն, ասի
ամոթխածութիւնը զսպած էր,
բայց այլոց օրինակը զանի ա-
զաս արծակից :

— Բարի խիզը լաւադոյն է
քան երկու վկայ. նա ազբււր
մ'է ծարաւողին, գաւազան
անդօրին, հովանի արեւէն
զարնաւողին, բարց 'ի ժամ
մահուան :

— Մարդս սկզբան տէր լինի
աշխարհի փոթորկալից յարա-
բերութեանց մէջ :

— Օրինակին նման փոխանցիկ
բան չկայ :

— Առանց արտայայտութեան
միտքը կը թուինայ եւ սիրտը
կը նեղուի. խորհուրդք եւ միտք
սլտք է արտայայտին որ չը
պղտորին :

— Օրիորդաց հանդերձը շատ
հեղ իրենց հոգւոյ հայելին ու
անմեղութեանը ջերմաչափն է :

— Յաճախ սխալելով միայն 'ի
վերջոյ ճշմարտութեան կը
հասնինք :

— Ճամանակ կայ որ օրինազանց
լինելն օրէնք մ'է. չկայ օրէնք
տոանց բացառութեան ենթա-
կայ լինելոյ :

— Տես, լռէ, լսէ. շատ հար-
ցուր, քիչ դատէ :



Ընտանեկան կարասիք ի Ղալաթիա
Մինասեանց Մաղաղան :

—Այլոց առջին հնար եղածին
չափ զուարթ լեր, իսկ արխ-
ուսթեանդ ատեն առանձնա-
ցիր :

—Քիչ խօստացիր, բայց ամեն
արդեւքի դէմ ջանա խօստա-
ցածդ կատարել :

—Այլոց քոյ վրայ ըրած դի-
տողութիւններն թող դքեզ
անձնաքննութեան մզեն եւ ոչ
թէ յուսահատութեան :

—Ձուարդութիւնը միաբը կը
դտէ, չափազանց աշխատու-
թիւնը զանի կը պղտորէ, վե-
հութիւնը զանի կերիտասար-
դացնէ :

—Սթէ մարդս իր թշուառու-
թեանը վրայ չխորհի հազիւ
թէ թշուառ է :

—Ան որ բարեկամութեան մէջ
բնու չկրնար խաբուիլ բարե-
կամ չկրնար ըլլալ :

—Մի վստահիր անոր որ ամեն

բանի լաւ է կրսէ . ոչ ալ անոր
 որ տանն բան վատ կը կոչէ .
 սակայն ոչ երբէք սյն արդուն
 որ ամեն բանի համար անհոգ է .
 — Երկրի մը հարստութիւնը իւր
 ժողովրդեան աշխատութեանը
 արդիւնքն է :

— Ծոյլերն միայն մեռնելէն ե-
 տեւ օգտակար լինին , զի աշ-
 խատաւորաց տեղ բանան :

— Յոյսը թշուառին երկրորդ
 հողին է :

Ժողովրդական Օրարացոյցին
 1874 թուին հանելուկներուն
 պատասխաններն են . 1. Ար-
 ձազանդ , 2. Ատիճանակից ,
 3. Պատկերաց մէջի կրակը , 4.
 Աշխարհացոյցին վրայի ծովերը ,
 քաղաքները , լեռները եւ դաշ-
 տերը , 5. Փետրվարին մէջ , 6.
 Ամենախոքը ձկանց աչքերը ,
 7. Խաչափառ , 8. Ժամանակ ,

9. Սառած ատենը , 10. Անկո-
 ղին : Երցանակն առաւ Ադադ-
 եան վարժարանը :

ՄՐԶԱՆԱԿԱԽՈՐ ՀԱՆԵԼՈՒԿՅՔ

1. Թէեւ ոտքին վրայ կը
 կանգնեցնեն սակայն միշտ գըլ-
 խու վրայ կը կանգնի — Ո՞վ :

2. Ասանց գրոյի թուանշա-
 նով ի՞նչպէս 1000 կրնայ դըր-
 ուիլ :

3. Քսակ մը սկիւրն Յը քեզի ,
 $\frac{2}{3}$ ը եղբօրդ , $\frac{1}{8}$ ն ալ բարեկա-
 միդ տուի . ի՞նչ մնաց :

4. Միւսնոյն դաշկինակին
 վրայ կանգնող երկու անձինք
 ե՞րբ զիրար չեն կրնար ծեծել :

5. Ո՞ր կէտը ամբողջ է :

6. Ո՞րն է ամենէն կարճ բա-
 ուր եւ ո՞րն է ամենէն երկա-
 րը :

7. Ո՛րքան հանես անքան մեծնայ:— Ի՞նչ է:

8. Տասնեփնին կէսը տասն է:— Ի՞նչպէս:

9. Սենեակին մէջ տեղը կանգնելով եւ շուրջից կալիճով շրջանակ մը քաշելով առանց սոյն շրջանակէն դուրս ելլելոյ սենեակին չորս անկիւններն դրուած խնձորներն առնելու ես:— Ի՞նչպէս:—

10. Հայ տառերը եւրոպական. ո՞րը մրցանակ ընդունեց:

11. Ձեռացդ մէջինը դու չես տեսներ, քովից եղողը կը տեսնէ:— Ե՞րբ:—

12. Ձուրը նետուած կատուն ի՞նչպէս դուրս կելլէ:

Ծանօթագրութիւնք իմ համար: ԱՌԱՋԻՆ ԱՆՊԱՄ ԳՐԱՌՈՐԱՍԿԷՍ անսխալ կերպով լուծողը հինգ արծաթ մէճիտնոց գիրք մը կընդունի հեղինակէն:

Լ Ա Պ Տ Ե Ր

ԾՆՈՂԱՅ

ՔԱՆԵ ԵՒ ՀԻՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Գ. Պաղատաարեան



Բովանդակութիւն:— Յառաջաբան: Ընդհանուր տեսութիւն: Այր եւ կին: Կազմակերպութիւն երախայի: Յղութիւն: Կանոնք վասն Յղի կանանց: Որոշումն որդեծնութեան ժամանակի: Որդեծնութիւն: Մայր եւ Մանկիկ: Մանկական մարմին: Մանկանց նախնական եօթն տարիներն: Հանդերձք մանկանց: Քուն եւ շարժում: Սպասուհի: Բնակարան եւ Ընկերակցութիւն: Մանկական հիւանդութիւնք: — Դեղնատութիւն, Աչաց եւ

բերնի բորբոքումն, Վէրքեր,
Փսիսել, Վալ, Փորհարութիւն,
Երևոյթական անկենդանու-
թիւն, Անդօրութիւն, Թերա-
կազմ լեզու եւ բերան, Տա-
րօրինակ մտանք, Աւզեղի եւ
աղիքներու պայթում, Անկու-
մըն ամորձեաց, Ստինքներու
բորբոքումն, Մորթի հիւան-
դութիւնք, Անկարդութիւն
միզելու գործարանաց, Ռո-
վանի սրղեր, Ասպոյտ հազ,
Անդդիական հիւանդութիւն,
Շրջումն ստաց եւ սրնգաց:—
Վերջին խօսք:— Մշտատեւ Տա-
րեցոյց Ամուսնական:

Ամեն ամուսնացելոց անհր-
րաժեշտ հարկաւոր եղող սոյն
նոր հրատարակութիւնը կը
ծախուի 'ի գին 6 դր:

Անդրոնատեղինորա Գալաֆ-
եան Գրատուն 'ի Չարմաքճը-
լար:

6738

2013

« Ազգային գրադարան



NL0032160

